ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻՆ

Փետրվարի 12-ին, Թբիլիսիի Վրացական ռադիոյի հայերեն հաղորդումների ժամանակ, ռադիոն անդրադարձավ ՎՐԱՑԻՆ-ՖՈՐՄ-ի հայտարարությանը, որը հրատարակված էր նույն օրվա «Սովետական Վրաստան», «Կոմունիստ», «Զարյա Վոստոկա» և մի շարք այլ վրացերեն և ռուսերեն թերթերում՝ «Տարերքը և մարդիկ» վերնագրի տակ: Հայտարարության մեջ հիշվում է, որ ջրհեղեղի հետևանքով, Արևմտյան Վրաստանի աղետյալներին օգնելու և պատճառված վնասների վերացմանը նպաստելու համար, աջակցում է ամբողջ երկիրը: Հայտարարության մեջ ասվում է.

— Օգնություն ցույց տալու գործում իրենց լուման են ներդնում նաև կրոնական թեմերի ներկայացուցիչները: Վրացական Ուղղափառ Եկեղեցին տուժածների օգնության ֆոնդ է փոխանցում 200 հազար ռուբլի, հայտնում է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը: Հայոց Առաքելական Եկեղեցու կողմից 100 հազար ռուբլի է փոխանցել Վազգեն Ա կաթողիկոսը: Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Պիմենը Ռուսական Ուղղափառ Եկեղեցու անունից խոր ցավակցություն է հայտնում վրաց ժողովրդին և նյութական օգնություն ցույց տալու պատրաստակամություն՝ ջրհեղեղի հետևանքները վերացնելու համար:

Ինչպես հայտնի դարձավ, Թբիլիսիի Հայոց Առաքելական Եկեղեցու թեմը նույնպես 40 հազար ռուբլի է փոխանցել տուժածների օգնության ֆոնդ:

Սույն հայտարարությունից հետո Վրաստանի ռադիոն խոսք է տալիս Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գեվորգ եպիսկոպոս Սերայդարյանին, որը ասում է.

— Մեր հայ և վրաց ժողովուրդները դարեր շարունակ ապրում են կողք-կողքի բարեկամաբար և սիրով: Դարերի պատմության ընթացքում այս երկու ազգերը ուրախացել են մեկը մյուսի հաջողություններով և տխրել մեկը մյուսի անհաջողությունների ժամանակ ու եղբայրական ձեռք մեկնել՝ իրենց ավելի ամուր, ավելի կայուն զգալու:

Այժմ, երբ մեզ հայտնի եղավ Արևմտյան Վրաստանի, ձեզ բոլորիդ ծանոթ մեծ աղետի մասին, առաջին հերթին Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետը արձագանքեց՝ իր ցավակցական հեռագիրը հղելով վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսին:

Իսկ մենք որոշում ընդունեցինք օգնել աղետյալներին, և Թբիլիսիի Սուրբ Գևորգ Մայր եկեղեցին, ինչպես նաև Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցին օգնության ֆոնդին հատկացրին 20-հազարական ռուբլի, ընդամենը 40 հազար ռուբլի:

Մեզ հայտնի է, որ մեր ժողովուրդը ևս շարունակում է նյութական օգնություն ցուցաբերել իրենց անձնական միջոցներից:

Ուրախ եմ և քաջալերում եմ մեր ժողովրդին, որը, եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին, այս մեծ փորձության պահին ցուցաբերեց իր արիությունը և զոհողությունը՝ եղբայրական ձեռք մեկնելով վրաց ժողովրդին՝ ի նշան հավիտենական անկեղծ բարեկամության: